

ԳԱՅՐԵՆԻՔ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Ա.ԶԳ.Ա.ՏԻՆ ԵՒ ԲԱ.Ղ.Ա.ԲԱ.ԿԱ.Ն

ՀԱՅՐԵՆԻՔ կը հրատարակուի ամեն շաբաթ օր : — Բաժանորդագրութեան պայմանք են Պօլսոյ եւ Գաւառաց համալսարանի ծախսը միասին 50 դր : — Վեցամսեայն մէկ հաւորդ օտմ. ոսկի. — Ձեռքէ կը ծախուի 40 փարայի : — Ո եւ է գիր եւ նամակ պէտք է ուղղել առ Տէր-Խմբագիր Մ. Յ. ՄԵԼԻՔԵԱՆ, Ս. Նիկողոսեանի տպարանը, Ֆին-հաներկար Եօզուշու Սաղրը խան բիւ 5 :

ՆԱՄԱԿԱՆԻ

Ը.

. . . Բարեկամ,

Օրուման հրատապ խնդիրն է Չմիւռնիոյ Առաջնորդական խնդիրը : Կարծես մոռցուեցաւ Պատրիարքական հրաժարման կարեւորութիւնը, մոռցուեցան բազմաթիւ կենսական խնդիրներ որք Վարչութեան սեղանին վրայ կ'սպասեն իրենց լուծման եւ որք կ'սպառնան ապագայ ցաւալի հետեւանաց : Այո, մոռցուեցան գաւառական բազմաթիւ խնդիրներ, Հայաստանցի ժողովրդեան բազմահոգ ցաւերն ու վշտեր, թափուր փիճակներու տղազակներ ու տրտունջներ որք Կեդրոնէն կ'սպասեն իրենց յոյսն ու մխիթարութիւն, այս ամեն խնդիրներ բարձի թողի եղած են, եւ ամենուն ուշադրութիւնն դրաւ ինքն է ու հանրային միտքը կը զգուշանայ Չմիւռնիոյ Առաջնորդական խնդիրն : Արդէն գիտէինք թէ խումբ մը եկեղեցականք յաշաղկուտ Տ. Մելքիսեղեկի Կաթողիկոսական ընտրութեան առիթ չէին փակցներ անոր մէն մի արարքը քննադատելու եւ անխնայ հարուածելու նորա անձնաւորութիւնը, ըստ որում եկեղեցեցւոյ եւ Աղղին քուէն կոչած էր զնա ի Հայրապետութիւն Ամենայն Հայոց : Նոյն եկեղեցականք այս անգամ եւս յագուրդ տուին իրենց յիշատակութեան կրից, հանրագիր մը ստորագ-

րեցին եւ մատուցին Ս. Պատրիարքին : Սոյն հանրագիրն խմբագրած է Տ. Խորէն Նար-Պէյ Սրբազան եւ ստորագրութիւն հաւաքած է Տ. Եղիշէ վարդապետ Այվազեան, ոմանց եկեղեցականաց սպառնալով, զոմանս ահարեկելով եւ այլոց խոստումներ ընելով : Ստորագրած են հինգ եպիսկոպոսուք որոց առաջին կը հանդիսանայ հանրագրին խմբագիր Սրբազանը, չորս ծերունի եպիսկոպոսուք, մի քանի աննշան վարդապետք եւ խումբ մը քահայնաներ : Մի առ մի չգիտեմք ստորագրող վարդապետաց եւ քահանայից անուններն, սակայն ստորագրեցինք որ սոյն հանրագիրն չեն ստորագրած մոյրաքաղաքիս եկեղեցեաց քարոզիչներու եւ աւագերէցներու մեծագոյն մասը, օրինակի ազաղաւ Տ. Խրիմեան Սրբազան, Տ. Սիմէոն եպիսկոպոս Սէֆէրեան, Տ. Վահրամ եպիսկոպոս Մանկունի, Տ. Հմայեակ եպիսկոպոս Դիմաքսեան, Տ. Ամբրոսիոս վարդապետ, Տ. Վահան վարդապետ Յակոբեան, Տ. Յակոբ վարդապետ Աշոտ, Տ. Յովհաննէս վարդապետ Արշարունի, Տ. Մովսէս վարդապետ Կէօմրիկեան, Տ. Գարրիէլ վարդապետ Անոյշեան, Տ. Վահան վարդապետ Տ. Մինասեան, Տ. Դէորդ քահանայ Խառնիւղի, Տ. Յովհաննէս քահանայ Մկրեան, Տ. Դրիգոր քահանայ Աճէմեան եւ այլք : Ստորագրող հինգ եպիսկոպոսաց առաջինն Տ. Խորէն Նար-Պէյ Սրբազան ծանօթ է արդէն իւր հակառակութեամբ եւ նախանձու ընդդէմ Տ. Մելքիսեղեկ Սրբազանի, մանաւանդ Կաթողի-

կուսական վերջին ընտրութեան մէջ բռնած ընթացքով, իսկ ստորագրութիւն հաւաքող անձը Տ. Եղիշէ վարդապետ Այվաղեան որ սկսած է նմանիլ Խորէն Արքայանի իւր շեղուաւ, հազուադէպ և բնթացքով, այն վարդապետն է որ Շահպաղ էֆէնտիի բանագրանաց առթիւ Պատրիարքական շքարեղանակներ յանդգնած է քննադատել Գառնի գիւղի եկեղեցւոյն մէջ և այս առթիւ ժողովրդեան դժգոհութեան պատճառ եղած և իւր քարոզը զանգակահարութեամբ ընդմիջուած է: Եւ այս վարդապետին քննադատութիւնք Պօլսոյ մէջ, Պատրիարքարանին քթին տակ, ընդ իշխանութեամբ Կ. Պօլսոյ Պատրիարքի, ըմբոստութիւն չեն համարուիր յաշտ աղգային իշխանութեան և վիճակաւոր Եպիսկոպոսի մը մէկ արարքը ըմբոստութիւն կը համարուի ընդդէմ Կեդր. Վարչութեան, այն Եպիսկոպոսին ըսել կուզեմք որ արժանեօք գեր ի վերոյ է քան զստորագրող Եպիսկոպոսունս և վարդապետս, և որ ամենայն Հայոց Հայրապետութեան կոչեցաւ Եկեղեցւոյ և Աղբիւն քուէով: Եթէ Ձմրուսիոյ հրատարակեալ Առաջնորդը սխալ մը իսկ գործած լինէր, պէ՛տք էր որ մեր բարեմիտ Եկեղեցականք այս աստիճան յուղուէին և նշուակելու փորձ փորձէին: Ասիկա չեմք հասկընար, ազգայն պիտի գատէ և ապագան անողք է, յայնժամ պիտի հասկցուի թէ ո՞վ է արդարը, ո՞վ է մեղաւորը:

Կարծես ինձ վիճակեալ է միշտ արտուր երեւոյթներ ի վեր հանել: Հաւատա՛ բարեկամ որ սիրտս կը մտմտի տեսնելով Աղբիւն դժբաղդ վիճակը որ կը գլմէ ի կորուստ, սակայն ո՞վ պիտի մտածէ թէ այս Աղբը հիմնական բարեկարգութեան և տեւական անդորր վիճակի մը կը կարօտի: Մեր մէջ կիրք, անձնականութիւնք և հակառակմարտ ոգին կը տիրէ միշտ, հանրական շահը և ընդհանուրին օգուտը ամեն լեզուի նիւթ եղած է, սակայն գործնական ընթացքի մէջ այդ ամենը արհամարուած են: Ո՞ր մէկն ըսեմ. Վանայ Պատրիարքական փոխանորդ Գեր. Այեթաթեան Արքայան Վասպուրականի գլխաւորական ժողովրդեան ոգրմելի վիճակը կը նկարագրէ Աղբ. Պատրիարքարանի և Կեդրոնին Կարեկցութիւնը կը հրաւիրէ: Կրօն. ժողովը պատրաստեալ կարճակէ, աղգային Վանօրէից հրաւեր կը կարգայ որ Վասպուրականցի ժողովրդեան նորաստին, նոյնը կրնէ նաեւ Աղթամարայ Ս. Կաթողիկոսի, Սակայն Կրօն. ժողովը գլխէ արդեօք թէ Հայաստանի վանքերն ինչ վիճակի մէջ են այսօր, շտտերը քայքայուած և մէկ մասը այս ու այն Միաբանից կրից և շահուն ճարակ եղած: Աղթամարայ Ս. Կաթողիկոսը ինչպէս կը նկարագրէր Հայրենիկի Ռեզեւորը, իւր քմահաճոյից և շահուն դործիք ըրած է Աղթա-

մարայ ընդարձակ Վանքը: Արդեօք Հայաստանի այդ վանքերն կարողութիւն ունին նպաստելու այս կամ այն ժողովրդեան, Կրօն. ժողովը իւր սերունին վրայ այդ վանքերուն հաշուեցոյցն ունի և գիտակցութեամբ տուած է այդ որոշումը թէ այդպիսի որոշում մը տալով միակը ցանկել ուղած է ժողովրդեան աչքին: Ս. Երուսաղէմի վանքը պարտուց ներքեւ կը հեծէ միշտ, և թէև դաւառացի ժողովուրդը իւր բաժնին ինկած տուրքը վճարած է, սակայն ընդ ամենը 4000 ոսկի մտած է Երուսաղէմի դանձը: Ո՞վ կը մտածէ այս վիճակին վրայ և ո՞վ կը ջանայ դարման տանիլ այս չարեաց: Պատրիարքական ինդիքն հետզհետէ կը ծանրանայ, պատգամաւորութիւններ կը կազմուին և յուսալիք կը վերադառնան, սակայն արդիւնք չտեսնուիր ապաւին: ԿԱՅԵԱՂ ժամանակաց մէջ երբ աղգային կենտանական ինդիքներ ծագէին, դո՛ւնէ աղբեցութեան տէր անձինք կը միջամտէին և խնդրոց լուծման համար կաշիտտէին ու կը յաշտէին: Երկրայ ժամանակին մէջ այդպիսի աղբեցիկ անձինք գոյութիւն ունին արդեօք, և ո՞վ կաշիտտի սյգժժ նյութիսի փրկարար աղբեցութիւն մը ի գործ դնել մեր կառավարութեան մաս փրկելու համար դԱՂԴՆ մտաւորաւ վտանգէ:

Արդեօք տեղը չէ ըսելու թէ մենք կենդանիներն կը զոհեմք մեռելոց սիրոյն համար:

Այս ամէն ցաւոց վրայ քիչ շատ կը միտնալարուիմք տեսնելով որ Գառնի գիւղի Յանձնաժողովը փութաձանութեամբ կը գործէ յօդուտ Ձէյթունի հրկիզեալ աղգային հաստատութեանց: Այս պատուական մարմնոյն ջանքերն արժանի են գնահատութեան և աղգովին շնորհակալութեան: Անոնք որ կը սիրեն Աղբին օգտակար ըլլալ, լուիկ մնջիկ կը գործեն, իսկ անոնք որ մեծադորդ ցոյցեր կընեն, օգտակար լինելէ աւելի վնասակար կը դառնան:

8 Իեկտեմբեր 1887
Կ. Պօլիս

ՍՈՒՐ

Խարրերդէն յԱղբ. Պատրիարքարան ուղղեալ հանրազրի մը պատճէնն է հետեւեալը:

Բարձրաշնորհ Արքայան Հայր Նախ ազա՛հ Աղբ. Կեդր. Վարչութեան պատկառելի Խառն ժողովոյ
Ի Կ. Պօլիս

Քարրերդի Առաջնորդական վիճակն, ծանուցեալ ի մէջ այրոց՝ բազմահօյ և արժանատոր, և յաշտ Բարձր Արքայանութեան Ձերում և պատկառելի Վարչութեանը լքեալ և անկերպարան, երկար տարիներէ ի վեր ամենայն եռանդեամբ կը

փափաքէր վերջ տալ իւր թշուառութեան և ազատել վիճակէ մը որ օր աւուր ի յոռի անդր կը դիմէր և կսպանանայր ընաջինջ ընել վիճակէս նոյն խոյ Հայութեան անունն: Քարբերդի վիճակը, կըսեմք, չկարենալով տոկալ մի այլակիսի սլորմանի կացութեան՝ դիմեց յոտս գթութեան Արքայնութեան Զերում և արգահատանաց մի ակնարկ հայցեց ի Զէջ առ ի կարենալ ազատելոյ յոյգ տառապալի վիճակէն և զինքն յոյգ առաջնորդող անխիղճ և անազորոյն եկեղեցականէ մը որ շուրջ 25 տարի քամելով ամառը ազգի մ'արիւնն՝ նորա ոսկրոտեաց հիւթն անգամ ծծեց և դեռ յագու գչառաւ իւր որովոյնն: Այս անգութեան կեղեցականէն էր և է՝ հանրածանօթն Պետրոս վարդապետ պատահան Քարբերդի Հայոց, և նախատինքն Հայ եկեղեցականութեան:

Քարբերդի Հայ ժողովուրդն, Արքայան Տէր ս'ըքան ուր իսկեղաւ, երբ լսեց Զեր Արքայնութեան և պատկառելի ժողովոյն այն իմաստուն որոշումն՝ որով ու շարկեց աստ Կեննչ և միանգամայն Առաջնորդական Տեղապահ խոհեմ, անձնուրաց և ուսեալ բարձրատիճան եկեղեցական մը, զԵր. Տ. Ղեւոնդ Արքայան Շիշմանեան, որ իւր հասած օրէն ի վեր անգուլ և անդադար կախատի յօգուտ վիճակիս և ի յառաջադիմութիւն նորին, որ մշտ կը քարոզէ ուղղել խեղաթիւրեալ միտքերն, որ հեռի ամեն անձնական և շահնկան նը կատուսներէ՝ անաշառութեամբ կը գործէ և որոյ արտադրած մեծամեծ օգուտներն երջանկապէս կը վայելէ Քարբերդ և պատիւ կը համարի իրեն, յետ այնքան տառապանաց, վիճակէն մի այլակիսի քղարագէտ, բարձր և իմաստուն անձնաւորութեան՝ որոյ համար Քարբերդի Հայ ժողովուրդն սիրայօժար կը բանայ իւր քսակն, առանց վանական և ոյլ ազգայն հաստատութեանց դիմելու ինչպէս կրնէին առաջ և ինչպէս կրնեն սյմ ուրիշ գաւառներ, և անձնական զհողութեամբ կը պահէ Ն. Գերապատուութիւնն՝ որով միայն կը յուսոյ բարուրեալ տեսնել գաւառիս ազգայն գործոց տխուր վիճակն:

Եւ սակայն ցաւօք որով կը տեսնէ Քարբերդի տառապեալ ժողովուրդն գարձեալ զոհ գնաց սծւյլ անխիղճ եկեղեցականին և իւր 3-4 արքանեկաց՝ ոչք ուխտած են ի գեղեւ հանել Ն. Արքայնութեան երկնած և ի գործ գրած ամեն ազգագուտ ձեռնարկներ, և ամեն երեւակայեալ միջոցներ կը գործածեն Զերդ Քարձր Արքայնութեան և կեղքոնական պատկառելի Վարչութեանը բմբունել տալու ճիշդ հակառակն՝ վիճակիս կացութեան, օգտուելով Վարչութեանը գիւրախար տրամադրութիւնէն և մշտ սենեակով խնդիր մը ինց մասն վնասթիւր և կանոնաւոր վարչու-

թեան մը նման պատկառելի Վարչութեանը հետ ի յարարերութեան լինելու: Կարեւորութիւն տալ գոցա գրուածոց, որպէս կընէ պատկառելի Վարչութիւնը, իշխանութեան մէջ իշխանութիւն, և Վարչութեան մէջ Վարչութիւն ճանչել կը նշանակէ որ երբէք պատիւ չբերեր Պատրիարքարանիդ: Իրաց այս կացութեան մէջ հրաժարել և եթ կը մնայ Ն. Գերապատուութեան և ահա հրաժարեցաւ իսկ:

Քարբերդի Հայ հասարակութիւն նկատելով որ հակառակ մնչեւ ցոյսօր ի Պատրիարքարան տեղացուցուած գրութեանց տակուին պատկառելի ժողովոյնոյն արամազրութեան մէջ կը մնար այդ եկեղեցականին նկատմամբ, նկատելով որ Պատրիարքարանիդ միտքն պատրուր մի քան ի անձինք են միայն որոց արժանիքն ի հարկին կարող եմք ցոյց տալ, և այդ մի միայն այն պատճառաւ, որպէս զի Առաջնորդարանի գործերն հիմն ի վայր տապալելով սս զարեյն մնայ միշտ Պետրոս վարդապետի ի շահ իւրեանց, նկատելով որ Պատրիարքարանը Պետրոս վարդապետի նկատմամբ բռնած իւր այս ընթացքով, ինք միայն է եղած ցարդ և կը լինի պատճառ խռովութեանց վիճակիս, նկատելով որ Պատրիարքարանիդ այդ արամազրութեանէն քաջալերեալ, Պետրոս վարդապետ ամեն վատութեան կը զիջանի ի կործանումն հանուր ժողովրդեան վիճակիս, նկատելով որ օտար հպատակի մը որ իւր օրական պարէնն ճարելու համար Պետրոս վարդապետի հլու կամակատարն է, թոյլ կը տրուի միջամտել ազգայն Առաջնորդարանիս, հակառակ Ազգ. Սահմանագրութեան, և Կայսերական տիրող օրինաց, նկատելով որ Պատրիարքարանը իւր իսկ յղած բարձրատիճան եկեղեցականի մը կարգելու գործունէութեան պատ անդարեղ ունենալ, նկատելով որ Ն. Գերապատուութեան նկատմամբ քաղաքաց մէջ և ի Պատրիարքարան հասած ամեն ստայօգրուածոց անըն աչք կը գոցէ պատկառելի Վարչութիւնը, նկատելով որ իրաց այս վիճակէն մէջ վնասուող միայն խնդ ժողովուրդն է, զի նորին Գերապատուութիւնն է՝ և մնայ միշտ նոյն բարձրատիճան եկեղեցականն, և վերջապէս նկատելով և վերահասու ըլլալով որ բաղմնայ գաւառի որ կործանումն երբէք ի նկատի չառնուիր և մի միայն թարուն նպատակաւ մը, որոյս բոցո քաղաքակն նութիւն մը ի գործ կը գրուի և այդ ալ լոկ խիղճ հանգացողներու համար թեբեւս արիւթիւնն մը համարելով, սոյն հանրագրութեամբ վերջնականապէս կը դիմէ Ամենապատուութեան Զերում և պատկառելի ժողովոյ և կը պահանջէ:

Ա. Անմիջապէս և վերջնական որոշումը հեռացնել վիճակէս Պետրոս վարդապետն՝ առանց

որոյ անկարելի է տեսնել խաղաղութեան հաստատութիւնն ի վիճակիս :

Բ. Եթէ Պատրիարքարանն անդոր է աստի հեռացնել այդ եկեղեցականն՝ չլսել իրմէ և իւր արբանեակներէ հասած գրութեանց :

Գ. Ետ դարձնելով Գեր. Ղեւոնդ Սրբազանի հրատարականն, լիալոր արտօնութիւն տալ Նորին Կերարարատուութեան Գաւառական ժողովոյ ընտրութեան ձեռնարկել որով երեւան պիտի ելնէ ժողովրդեան կարծիքն՝ յորժամ պիտի տեսնուի թէ Գեր. Տ. Ղեւոնդ Սրբազան իւր հանճարեղ քաղաքագիտութեամբ և աշխուրջ գործունէութեամբ արդէն ընտրուած է Առաջնորդ վիճակիս, մէն մի ազգայնոյ սրտին մէջ և յայնժամ միայն պիտի վերջանան ամեն առարկութիւնք :

Իսկ եթէ հակառակ մեր այս պահանջմանց, Պատրիարքարանն դարձեալ նոյն ընթացքն շարունակէ, մեզ հաւատացուցած պիտի լինի թէ՛ անդրդուելի եղանակաւ մտադրած է բովանդակ գաւառ մը Պատրոս վարդապետի զոհել. յայնժամ մենք եւս Սահմանադրութիւնն ի ձեռին և շնորհիւ մեր Օգոստափառ բարեխնամ Կայսեր արդարագատ կառավարութեան կարող պիտի ըլլամք մեր ովսանն պաշտպանել մեր շահերն, ամենայն իրաւամբ և խղճի կատարեալ հանդարտութեամբ :

Հայ ժողովուրդ Գարբերդի վիճակին
Ստորագրութիւնս (491)

18 նոյեմբեր 1887
Գարբերդ (Մէղիբէ)

... Խմբագրապետ Տէր,

Հայրենիդ 3265 թուոյն մէջ տեսնուեցաւ Բաստորագրութեամբ և Գաւառական Արձագանք վերնագրով յօդուած մը :

Այդ գրութեան հեղինակն՝ որ կ'երեւի թէ որոշ արդէ կը ճանապարհորդէ ի Խնուս, ի Խիզան և իրր թէ գաւառացւոց կարծեաց արձագանք կը լինի, ամեն մասամբ իրեն յարմար անուն մը դրած լինելով (Բու) որ իրր թէ այցելած եղեր է նաեւ Խիզան և անդ չէ գտած Լն՝ վարժարանն, այլ գտած է նորապսակ դասատու մը՝ որ իւր չքնաղ ամուսնոյն վրայ կուլայ եղեր, իր հետ զանի ուղած տեղ փոխադրել չը կարողանալուն համար : Այս առթիւ այդ գիշերաչրջիկ բան կը յաւելու ըսելով թէ՛ «Արեւելեան անիրաւութիւնն ըրած է նշանակելով Խիզանու Աւսումն. ընկ. դասատուաց ամասականք 15 զրուշ. իսկ ինք հաշուով մը 15 փարա անգամ չգտներ», առանց հաշիւը ցոյց տալու, ասոր հակառակ կը գրէ թէ՛ «Պղինձէ քաղաք, Երազահան, Եօթն իմաստասէր ևլն. գրեանց, անհո-

նար օրինակները զրկուած են նոյն Ընկ. վարժարանը՝ ուր ինքն տեսած է» եղեր :

Բ. ի գրած սոյն տողեր որչափ խղճի դէմ նոյնչափ ծիծաղելի են, վասն զի իւր յիշած գրութեանքն Պոլսոյ մէջ արդէն հաղաւագիւտ են և ոմանք եւս 20 տարիէ ի վեր սպառած, ուրեմն այդ գրութեան նպատակն ուրիշ բան չէ, բայց եթէ հարուածել տեսնամեայ ընկերութիւնն Արեւելեաց հաճոյ երեւնալու համար որմէ ունեցած ակնկալութիւնը մեզ անծանօթ է :

Աստի, իբր աղբայն անհատ և սիրող ճշմարտութեան և նախանձախնդիր աղբայն կենսական շահուց որք կրնան վտանգիլ այս օրինակ կեղծ աղբասէրներու գրութիւններէն, կը խնդրեմք յատկապէս Խիզանու Աւսումն. ընկերութեանն որ բարեհաճի հրատարակել տայ իւր վարժարանաց զրկած գրքերու ամաղջ ցուցակն, ի միամիտութիւն Հայրենի յարգոյ ընթերցողաց և ի հեճուկս այդ անխիղճ գրութեանց հեղինակներու, որոց համար Աւետարանն շատ լաւ կ'ըսէ, Վայ մարդոյն այնմիկ՝ յոյր ձեռն գայցէ գայթակղութիւն, լաւ է նմա եթէ կախիցէ երկան իշոյ ընդ պարանոյ նորա՝ և ընկղմնցի ի խորս ծովու : Մատթ. Ը. գլուխ :

11 դեկտ. 1887
Կ. Պոլիս

Գ Ի Տ Ա Կ Ա Ն

(Եր. րէս 3266 Բէ-Էն)

Գ.

ԵՐԱՊԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Երաղի մը գոյացութեան համար մտաւորական կարողութեանց մի քանիններուն արթուն մընայն հարկաւոր է (որպէս յիշած էի առաջին յօդուածիս մէջ) : մտաւորական կարողութիւնք հինգ են, 1—Ուշագրութիւն 2—Յիշողութիւն 3—Գործարարութիւն 4—Երեւոյնութիւն 5—Մտայն գործնութիւն : Այս կարողութիւնք երբ ամբողջովին քնեն, երաղն չկրնար գոյանալ, և քունը կատարեալ հանգիստ մը կըլլայ, որպէս կը պատահի շատ անգամ՝ ամաղջ օրը շարաչար հոգնած անձանց որոնց առաջին քունը անխռով և հանգիստ է : Մտաւորական կարողութեանց եթէ միայն մէկը արթուն լինի, երաղն կըրնայ յառաջ գալ և շրջիլ հաւատարմարար բոլոր այն գաղափարաց շրջանակին մէջ որք այդ կարողութեան կը վերաբերին, եթէ այս պարագայի

մէջ միւս կարողութիւնները արթննալով վերսկսին իրենց գործնէութեան, յայտնամ երազը աւելի սպայծառ և շարունակական կը լինի. օրինակի համար, երբ յիշողութիւնը ընկերակցի դատողութեան, սին ամեն երազ պիտի ընթանայ՝ յստակ, պայտառ, գաղափարաց և պարագայից լաւ կապակցութեամբ, յարարերութեանց միութիւնը սինպէս հաւատարիմ և բոլոր առարկայ իրենց մանրամասնութեանց մէջ սինչափ ճշդութեամբ պիտի ներկայանան որ պոլիօթիւնը ճշմարտութեան բոլոր երեւոյթները պիտի զգենու...

Այս վիճակի մէջ ուշեղը՝ սինչափ մեծ կարողութիւններ կը վայելէ՝ որչափ իւր գործնէութիւնը կեդրոնացած լինի. Մի կամ մէկէ աւելի մտաւորական կարողութեանց վրայ կենտրոնացող զբոսն այս կեդրոնացումը այնպիսի կարողութեան աստիճան մը յառաջ կը բերէ որ քնողը ապագայի հաւանականութեանց կը թողանցէ, դժուարութիւններ կը լուծէ, գլուխ գործոցներ կը շարադրէ զորս իւր յարաբերական կենաց (արթնութեան) մէջ չէր կարող. երբ այս կեդրոնացումը չըլլայ, այսինքն՝ մտաւորական կարողութիւնք ըստ իրենց նպատակի մը և նոյն աստիճան զատ զատ հսկեն և գործեն, երազն միջին, անկապ, ընդհատուէլը լինի. վերջապէս եթէ պատահի որ մտաւորական կարողութեանց միջին պաշտօնն նուազի և միւսինն աւելնայ, յայտնամ կունենամք երազներու շարք մը որք արագապէս կը ծնին և կ'անհետին տեղի ապու համար մը և նոյն կարծ տեւողութիւնն ունեցող երազներու. — Բեթե- եր- շե- : Այս տեսակ երազները Բեթե- քոյ (somnia) յատուկ են որ է տեսակ մը անկատար քուն քրանաթոր աշխատութեանց, յոգնութեանց և վերջապէս բարոյական կամ փիզիքական նեղութեանց ենթարկելոց :

Արթնութեան միջոցին ստացուած տպաւորութիւն մը կամ գաղափար մը յամառաբար ուղեղին զօգտելով շատ կարելի է որ երազը զանոնք կրկին մեզ պատկերացնէ. դիւրագրգիռ ջղային կազմութիւն ունեցող անձինք եթէ մտաւորական չարաչար աշխատութենէ մ'ալ իրենց ջղային գրութիւնը գրգռուած լինի, օրինակի համար, գրադէտները՝ քնոյ մէջ իրենց երկերու կաշխատին, կը լուծեն դժուար խնդիրներ, և կը շարադրեն ճառեր ու ստանաւորներ բոլոր ներշնչման դիւրութեամբ :

Իսկ մը պարագաներ երազներու կազմակերպութեան և տեսակին վրայ կը ներգործեն, այս պարագայներ պիտի գասակարգենք ըստ սեռի, տարիքի, խառնուածքի (մարմնոյ), վայրի, ընկերային վիճակի և ըստ գործարանաց առողջ կամ վատառողջ վիճակի :

Բարոյական և փոքր զգացումներ

Քաջառողջ անձ մը որուն գործարաններն իրենց պաշտօնի մէջ կատարեալ հանդիսա կը վայելեն և որուն խելքը ու միտքը հանդարտ է, իւր երազներն թեթեւ, հանդարտ և հաճելի կը լինին, իսկ հիւանդագին վիճակի մէջ ծանր, յոգնեցուցիչ, ցաւադին և ստեպ զղուելի ու սոսկալի են. այս տեսակ երազները կը կոչուին Գլխաւոր :

Բայնք որ արթնութեան ժամանակ թեթեւ զգայութիւնները երազի մէջ նշանաւոր ոյժ և ոաստկութիւն կ'ստանան, նա մանաւանդ երբ գործարան մը նեղուած և կամ գրգռուած է : Մարդկային գործարանաւորութեան այս վիճակը ամենասովորականն է, զի շատ հաշուադէպ է, չլսումք անկարելի, որ մարդու հոգին ու միտքը և մարմինը կատարեալ անգործ վիճակի մը մէջ լինին :

Այսպէս ըստ բարոյական անհանգիստ կամ փիզիքական ցաւալի վիճակաց՝ լուի մը կծծելէն գոյացած զգայութիւնը երազի մէջ մշնչեւ սուրի հարուածի մը չափ սաստկութիւն կ'ստանայ՝ զանգալի մը ձայնը աղէտագոյժ զանգալի մը ողբագին ձայնին պէս պիտի թրթռայ. ըստ գաղափարաց մտաւորական աղէտագոյժ զանգալի ձայնը սուկալի և աշատսովոր դէպքի մը նշանակ է, խռովութեան աղաղակ մը և կամ հրդեհի գոյժ մ'է : Քնողը՝ սարսափած բազմութեան մը չորս կողմ վաղելը պիտի տեսնայ. պիտի լսէ օգնութեան ազաղակները, պիտի տեսնէ բոցեր որ շէնքէ մը դուրս կը խուժեն և զայն պիտի լսին. և եթէ զարթնումը տեղի չունենայ, հրդեհի մը բոլոր պարագայից ներկայ պիտի գտնուի :

(Շարժական է) ԲԺ. Կ. 3. ՓԱՆՍԵԱՆ

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Վեհ. Սուրբանը վաւերացուցած է սյի պայմանագիրն որ Բուսէլի երկաթուղեաց գծերու միացման առթիւ կնքուած էր Բ. Դրան և սերպիական գետաբանատան միջեւ : Այսօր, Արտաքին գործոց պաշտանատան մէջ երկուստեք պիտի վիճականակուին վաւերացեալ պայմանագրերն :

— Կնամանք թէ հետզհետէ վիճենայէն և Բեդերսպուրիէն առնուած լրոց վրայ որք կը յայտնէին թէ Ռուսիա և Աստիա նոր զարկ մը կուտան իրենց զինուորական վիճակական պատրաստութեանց : Բ. Դուռը պատշաճ գասեր է ինչ ինչ զգուշական միջոցներ ձեռք առնուլ, եւ-

րոպական պատերազմի մը պատահականութեան համար: Հետեւաբար յետաձգած է 1882 և 1883 տարիներու պահեստի գումարներն, ինչպէս նաեւ թնդանօթածիգ և հեծեալ զօրաց արձակումն: Մի միայն հետեւակազօրաց փոքր մաս մը արձակուած է:

(Մոտոպուլ)

— Ռուսական դեսպան Պ. Նէլիտովի վերջին օրէրս նորանոր ձեռնարկներ ըրած է Բ. Իրան մաս պատերազմական սուգանաց վճարման համար: Դեսպանը մասնաւորապէս սրտեր է թէ հարկ կոյ դոնէ գումար մը որոշել իր գլխավճար որուն որոշեալ պայմանաժամերու մէջ գանձման վերայ Ռուսիա ապահով լինի: Յայտնի է թէ Բ. Իռ. ուն յանձն առած էր այդ հաշուէն տարին 350,000 ոսկի վճարել, գաւառաց ոմանց տասանորդի տուրքերով երաշխաւորեալ, սակայն վերջին չորս տարուց մէջ եղած վճարմանը այդ գումարն հասածին, այնպէս որ 400,000 ոսկեայ պարտք մը մնացած է որուն վրայ աւելցունելով ներկայ տարեվճարն ընդհանուր գումարը կը հասնի 750,000 ոսկեայ:

Ստամբուլ կըսէ թէ մայրաքաղաքին պաշտօնական ակմբոց մէջ այդ յազարդ մը կը վերագրուի վեցոյնիեալ գաւառները սիրող նիւթական անձկութեան և արոց գանձման յապաղման: Կառավարութիւնը մինչեւ իսկ պէտք տեսած է այդ գաւառաց մէջ գանձուած դրամաց մէկ մասն յատկացնել ցորենի գնման, որպէս զի ժողովուրդն ազատ սովէ կորնչելու վաանդէն:

— Սպարապետի Գուռը ծանոց թողոր գաւառաց թէ ճանրորդներու տրուելիք զինուց արտօնադրերն յետ սյ ոչիկ ոստիկանութեանց կողմէ պիտի տրուին, մէկ տարի պոյնճաժամ պիտի նենամ և միայն 5 դրոշ տուրք պիտի առնուի անոնցմէ: Այդ արտօնադրեր պիտի գանուին գաւառաց ոստիկաններու գնդապետաց քով սրբ ակզական պաշտօնէից հետ միանալով պիտի տան զոյնս ճանրորդաց և օրինաց արամադրութիւնն ր գործ պիտի դրուի ամեն տնոնց նկատմամբ որք առանց արտօնադրի զէնք կը կրնն:

— Վեհ. Սուլթանը ակզեկանալով որ Զօրումի ժողովրդն ևս մեծապէս է առած է երաշտութենէն, հրամայած էր ծանուցանել Էնկիլիկի կուսակալ Ապետին փաշայի որպէս զի պէտք եղածն ի գործ դնէ: Ապետին փաշա կայսերական ույն հրամանին համաձայն 31400 քիլէ արմտիք զրկած է ի Զօրում կարօտելոց բաշխուելու համար, ձեռամբ անդսկան յանձնաժողովոյ մը: Տեղւոյն ժողովուրդն այս առթիւ չտրհակալեաց և երախտագիտութեան գիր մը ուղղած է ի կոյն բական պաշտա:

— Ամերիկացի մշտնապետ Պ. ձէյ կուլա՝ որ

Պ. Վանտերպիլդէ աւելի հարուստ է շաքիթու մէջ մայրաքաղաքս պիտի գայ իւր յատուկ զբօսանաւով:

— Ի նպատա Իւսկիւտարի հրկիզելոց ցարդըւած հանդանակութեանց գումարն է 461,498 զրշ: ուստից հանելով 80,720 զրշն. որ ծախուած է Սէլիմիյէ շորանոցէն այլուր փոխադրուած հրկիզելոց տան վարձք, հաց և փոխադրութեան ծախս տրուելով, կը մնայ 381,778 զրշ: Այս գումարին վրայ աւելնելով 58,725 զրշ. որ գոյացած է վերջն եղած զանազան նուիրատուութիւններէ, հանդանակութեան գումարը կը հասնի այժմ 440,503 զրշի:

— Էմիրիէնի ծովեզերեայ ապարանքին մէջ մեծամեծ պարաստութիւնք կը տեսնուին նախորդ թաիվ Իանիյի փաշայի գալստեան համար:

— Ռուսիոյ դեսպանատան մէջ նախընթաց դիշեր ի նպատա Իւսկիւտարի հրկիզելոց արուած նուագահանդէսէն 500 ոսկի հասոյթ գոյացեր է:

— Հոռոմեական Հայոց Պատրիարք Գեր. Աշարեան Սրբաշն շորեքշարթի օր մայրաքաղաքէն մեկնեցաւ ի Հոռոմ, Պապին յորեւրանի հանդէսին ներկայ գանուելու համար:

— Եզեռնագատ ասեանն նախընթաց օր մահուան գատապարտեց Սերաստացի Ապպաս անուն թուրք մը որ Պոլսոյ Պաթիկ թաղը գանուած Ապտուլհայիմ Սէտրէսէի ուսուցիչներէն Տիվրճիցի Շաքիր էֆէնտին սպաննած էր:

Գատապարտեալն, որ գատարմէն ելած միջոցին կատղած երևոյթ մ'առած էր, հանդիսականաց ոմանց վրայ յարձակելով ապտակեց գաննք, սակայն ոստիկանք անմիջապէս արգիլեցին:

Ապպաս Շաքիր էֆէնտի բարեբարեալն էր, որ զինքը Սերաստիայէն բերելով մէտրէսէն դրած էր դաստիարակելու համար: Ապպաս, ի փխտրէն Շաքիր էֆէնտիի այս բարեգործութեան, իւր Պոլիս ժամանելէն ութ օր յետոյ քսան ոսկեայ համար սպաննած էր իւր բարեշարն:

— Կարինէն կը դրն մեզ: Բասնոյ մէջ օր ըստ օրէ սպանութիւնք կը շատնան: Զարագործաց զլիւսուր Գիւրճի առաքակապետի մը անունը կը յիշուի որ յառաջագոյն ուստական սահմանաց վրայ կը գործէր, սակայն շատեր են որ նորա անունն առած վրանին բազում չարիք կը հաստցանեն: Վերջին աւուրց միջ սպանեալք են: Տօտի գիւղացի Անտօն Գեորգեան և Այսեպատ գիւղացի Աւետիս Զօրոյեանն արոց առաջինը գնդակահար լինելով յետ սակաուց կը մ.ռնի, և մըսն ալ խեղղամահ լինելով, անդաթ չարագործք յատկեց ցղլուխ կը մերկացնեն զնա և միայն խեղղը կը թողուն վրին վրայ:

Աւետիս



ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ

Ե- շք-ի-յից

Վարժարանաց և Ժողովրդեան համար

Աշխատասիրեաց

Յ. Կ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

Կ. Պօլսոյ Տեղական աշխարհագրութիւնը նախնական կարգերու աւանդելու համար յօրինուած դասագիրք մ'է, Աղգ. Ուսումն. Խորհրդոյ հրատարակած Ուսմանց նոր Ծրագրոյն համաձայն պատրաստուած: Ժողովուրդն, մասնաւորապէս ճանապարհորդք, կրնան նմանապէս օգտիլ սոյն գրքին ընթերցանութենէն, որ իրրեւ յաւելուած՝ առեւտրական ասպարիղի մէջ դորձող անձանց համար կը պարունակէ նաեւ Կ. Պոլսոյ խնէրոս շք-ի-յից:

Կեդրոնատեղին է Ուզուն Չարչը, Փորագրիչ Երուանդ Փալաղաշեանի խանութը: Կը ծախուի բոլոր գրավաճառաց և Պահճէ-գարուի չրավաճառաց քով: Դին 100 փարա:

Ժ Ի Ի Լ Վ Է Ը Ն

ՈՒՂԵԻՌՈՐՈՒԹԻՒՆ

ՇՈՒՐՉ ԶԼՈՒՄՆՈՎ

Աշխարհահռչակ հեղինակին սոյն մեծարժէք և հրահանգիչ դորձն, որոյ առաջին մասն — Ուշ-բո-նի-ն յերէն է Լ...-ին — արդէն քանի մը տարի առաջ հրատարակուած և այնքան մեծ ընդունելութիւն գտած էր, ի ըստ ընծայուեցաւ Պօլսոսեան գրատան կողմէ, և կը վաճառուի ի գին 8 զրշ: Կը գտնուի բոլոր գրավաճառաց քով:

— 0 —

ՏԵՐ ԽՄԱԳԻՐ

Մ. Յ. ՄԷԼԻՔԵԱՆ

ՏՊԱՐԱՆԱՏԵՐ—ՍԱՀԱԿ ԿԻՎՈՂՈՍԵԱՆ ՍԵՐՁ. Մ. ՆԵՐՍԻ

բարդութիւն մ'է, սիրել ա իւր սէրը չը կրնար յայտնել գծրադրութեանց մեծագոյնն է, ստիպելն վիճակ մ'է որ մարդս յուսահատութենէն ալ անդին կը տանի'...

Ի՞նչ անձանօթ զօրութիւն մ'էր այդ որ կ'արգիլէր Հայկանուչ իւր սիրտը վաճանի բանալու... պատասխանն անոնք կրնան տալ որք հողերանութեամբ կ'զբաղին և կամ անոնք որ այսպիսի վիճակի մ'ենթարկուելու գծրադրութիւնն ունեցած են, այսինքն սիրած են մէկը և չեն կրցած իրենց սիրոյն վրայ խօսք մը, բառ մ'արտասանել, թէ և հազար անգամ առիթ ունեցած են և կամ մտազիր եղած են...

Ինչպէս ըսինք եղանակը ձեռք էր, գիշեր մը Հայկանուչ ճաշէն վերջ պարտէզ իջաւ. կարծես կուզեր իւր սրտի հուրն սառոյցներու մէջ մարել... ի զուր ջանք:

Ափի մէջ ձեան կտորներ առնելով կը խաղար, պարտէզը սպիտակ ձիւնով ծածկուած էր. լուսինն ալ կրկին փայլ մը կուտար այդ տեւարանի, Հայկանուչ մինակ էր այդ պարտէզի մէջ, կարծես սպիտակ ամպերու մէջ նկարուած հրեշտակ մ'էր. արտասուաց կաթիլներ չէին դուրս գալ թրջել այդ անմեղ կոյսի վարդագոյն սյուերը, և անխիղճ խորհուրդներ՝ հրտակաց խումբի նման պաշարած էին արդէն ծանրարեւոնեալ այդ թշուառ գլուխը:

Յանկարծ ուրախութեան ժպիտ մը փայլե-

«Նամակիս տարօրինակ կերպով ձեռքդ հասնելուն թէև բացատրութիւն չես ուզեր, սա, «կայն մեր շահը կը սահմանջի որ անգլիկանսս դու իմ կողմէն նախընտրած եր սպասուող կողմէն կը «յանձնէ նամակս այն ալ այդ միջոցաւ քեզ կըր- «նանք շարունակել մեր նամակագրութիւնը. եր- «կուքն ալ հաւատարիմ են մեզ:

«Վերջ կամ գրոյս իմ երանութիւնս քու կի- «նին խառնելով, ինչպէս իմ սէրս քու սիրոյդ հետ «միանալով մեր կեանքը պիտի կապեն որ անմա- «հացաւ...»

«Ձքեզ միշտ պաշտող սիրու հիւղ
«Մարիա Խրիստովիչ»